



ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՀԱՅԱՆԻՍԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գ. Հայանիստ, Հայկ Բժշկյանց 6
Հեռ. 094 52-70-00
Էլ.փոստ՝ hayanist@schools.am

«09» 01, 2018թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է ՆԶՊ – ի (1դրույք) և Քաղ. պաշտպանություն (0,5 դրույք) ուսուցչի թափուր տեղ, որի համար հայտարարվել է մրցույթ: Կից ներկայացվում է հայտարարության տեքստը (առդիր 1 թերթ):

Դպրոցի տնօրեն՝  Էսիսյան/



108
10.01.18

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Հայանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆՁՊ-ի (1 դրույք), քաղ.պաշտպանության (0,5 դրույք) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ: ՆՁՊ-ի ուսուցչի մրցույթին մասնակցողը պարտադիր պիտի ունենա պահեստագործի սպայի կոչում եւ տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2018 թ. հունվարի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2018թ. փետրվարի 2-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Հայանիստ, Հայկ Բժշկյանց 6:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 52-70-00 հեռախոսահամարով: